

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթեյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-126-11.09.2017-ՊԻՄԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1128-Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ
ՆԱԽԱԳԾԻ (Պ-126-11.09.2017-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Օրենքի նախագծով առաջարկվող փոփոխությունն անհրաժեշտ ենք համարում դիտարկել «ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) և Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան կարգավորումների հետ համակարգային կապի մեջ: Այսպես՝ օրենքի՝

1) 13-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ձերբակալված կամ կալանավորված անձն իրավունք ունի առողջության պահպանման, այդ թվում՝ ստանալու բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական օգնություն, ինչպես նաև զննվելու իր ընտրած բժշկի կողմից՝ իր դրամական միջոցների հաշվին:

2) 21-րդ հոդվածի համաձայն՝ ձերբակալված կամ կալանավորված անձի մարմնին մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի բուժաշխատողը կամ հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը: Բժշկական զննությունն իրականացվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Բուժզննության արդյունքները սահմանված կարգով գրանցվում են անձնական գործում, և դրա մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ

օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» N 825-Ն որոշման N 1 հավելվածի 37-րդ կետի համաձայն՝

«Կալանավորվածներին պահելու վայր ընդունվելիս՝ անձինք անցնում են նախնական բժշկական զննություն, որի արդյունքներն արձանագրվում են համապատասխան մատյանում՝ բժշկական օգնություն ցույց տալու և մարմնական վնասվածք կամ առողջական վիճակի վերաբերյալ այլ գանգատ արձանագրելու նպատակով: Բոլոր բժշկական զննությունները պետք է անցկացվեն քրեակատարողական կամ այլ ծառայողների լսողության և տեսողության սահմաններից դուրս:

Եթե բժշկական զննության արդյունքում հայտնաբերված մարմնական վնասվածքը կամ առողջական վիճակի վերաբերյալ գանգատը, ըստ կալանավորված անձի կամ դատապարտյալի հայտարարության, հետևանք է նրա նկատմամբ հանցագործության հատկանիշներ պարունակող որևէ արարքի, ապա բժշկական զննություն իրականացնող անձը դրա մասին տեղյակ է պահում կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմին: Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմը դրա մասին անհապաղ տեղյակ է պահում իրավասու մարմիններին: Ցանկացած բժշկական զննության արդյունքները, ինչպես նաև կալանավորված անձի հայտարարությունները և բժշկի եզրակացությունները պետք է մատչելի լինեն կալանավորված անձի կամ դատապարտյալի և վերջինիս կողմից լիազորված անձի համար:»:

Նույնաբովանդակ կարգավորումներ են նախատեսված նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 1543-Ն որոշման հավելվածի 14-րդ և Հայաստանի

Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 574-Ն որոշման հավելվածի 13-րդ կետերի դրույթներում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներով ամրագրել է, որ իշխանություններն ունեն կալանքի տակ գտնվող անձանց ֆիզիկական անձեռնմխելիությունը պաշտպանելու պարտականություն: Եթե անձը հսկողության ներքո հայտնվելիս եղել է առողջական լավ վիճակում, սակայն ազատ արձակվելիս նրա մարմին հայտնաբերվել է վնասվածք, ապա պետությունը պարտավոր է տրամադրել համոզիչ բացատրություն այդ վնասվածքի առաջացման պատճառների մասին, այլապես խոշտանգման, վատ վերաբերմունքի վերաբերյալ ենթադրությունը կարող է գործել հոգուտ տուժողի՝ հանգեցնելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման (Tomasi v. France (1992), Aksoy v. Turkey (1996), Selmouni v. France (1998), Corsacov v. Moldova (2006): Մեկ այլ գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ կալանքի ընթացքում կամ ոստիկանության հսկողության ներքո գտնվելու մյուս ժամանակահատվածներում անձին պատճառված վնասը ծանրակշիռ հիմք է տալիս ենթադրելու, որ այդ անձը ենթարկվել է վատ վերաբերմունքի (Bursuc v. Romania (2004):

Նշված դրույթների, ինչպես նաև ՄԻԵԴ-ի արտահայտած դիրքորոշումների բովանդակային վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ գործող օրենսդրական կարգավորումները լիակատար հնարավորություն են ընձեռում ձերբակալված կամ կալանավորված անձանց հարկ եղած դեպքում պաշտպանելու իրենց իրավունքները: Ավելին, դատախազությունը, լինելով պատիժների և հարկադրանքի այլ միջոցների նկատմամբ հսկողություն իրականացնող մարմին և ունենալով համապատասխան

լիազորություններ, ապահովում է թե՛ ՔԿՀ-ներում, թե՛ ՁՊՎ-ներում բռնությունների և խոշտանգումների հնարավոր դեպքերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քննությունը:

Այս առումով օրենքի նախագծով նախատեսվող կարգավորումը չի բխում օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորմամբ բարձրացվող խնդիրներից, կարգավորման նպատակից և դրանից ակնկալվող արդյունքներից:

Հարկ է նաև նշել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի հուլիսի 24-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը ցուցաբերվող շտապ բժշկական օգնության տրամադրման չափորոշիչը, շտապ բժշկական օգնության կանչի թերթիկի ձևը, իրազեկման թերթիկի ձևը, շտապ բժշկական օգնության դիսպետչերի գործառույթների նկարագիրը հաստատելու մասին» թիվ 39-Ն հրամանի համաձայն՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում ապահովվում է արտահիվանդանոցային անհետաձգելի շտապ բուժօգնություն և հոսպիտալացում՝ ռեանիմացիոն, ընդհանուր գծային, ֆելդշերական բրիգադների, ինչպես նաև արագ արձագանքման ծառայության միջոցով:

Շտապ բժշկական օգնության կայանը (բաժանմունքը) պացիենտներին հոսպիտալացնում է կյանքին վտանգ սպառնացող և անհետաձգելի հիվանդանոցային բուժօգնություն պահանջող դեպքերում՝ անկախ ախտորոշումից, քաղաքացիությունից և սոցիալական կարգավիճակից:

Այսպիսով՝ պետության կողմից երաշխավորված անվճար շտապ բժշկական օգնությունը, որպես կանոն, ցուցաբերվում է *արտահիվանդանոցային անհետաձգելի շտապ բուժօգնության և հոսպիտալացման դեպքերում*:

Շարադրվածից հետևում է, որ մյուս դեպքերում շտապ բուժօգնության ծառայությունները մատուցվում են վճարովի հիմունքներով: Հետևաբար, ձերբակալված կամ կալանավորված անձի մարմնին վնասվածքների հայտնաբերման դեպքում շտապ բժշկական օգնության ծառայության կողմից բուժօգնություն կատարելու պարտադիր պահանջի ամրագրումը կարող է հանգեցնել լրացուցիչ ֆինանսական ծախսերի՝ հաշվի առնելով այն, որ մարմնական վնասվածքների առկայությունը, որպես կանոն, չի հանգեցնում անհետաձգելի շտապ բուժօգնության ցուցաբերման կամ հոսպիտալացման անհրաժեշտության:

Միաժամանակ, կարևորելով ձերբակալված կամ կալանավորված անձանց իրավունքների ու ազատությունների խախտման դեպքերի բացահայտման անհրաժեշտությունը, հարկ է նշել, որ օրենքի նախագծով նախատեսվող կարգավորմամբ հնարավոր չէ լիարժեք երաշխավորել բուժօգնության օբյեկտիվությունն ու անկախությունը և լուծել սուբյեկտիվ գործոնների ազդեցությունը բացառելու խնդիրը: Այս առումով խնդրին համակարգային լուծում տալու նպատակով անհրաժեշտ է մշակել հստակ մեխանիզմներ՝ բուժօգնության պատշաճ կազմակերպման նկատմամբ հսկողությունը խստացնելու, ինչպես նաև ձերբակալված կամ կալանավորված անձանց վնասվածքների վերաբերյալ մատյաններում ամբողջական և պատշաճ գրառումների կատարման համար:

Հարկ է նաև նշել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 19-ի նիստում հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների արդիականացման հայեցակարգը, որի ընդունմամբ բժշկական սպասարկման ոլորտում նախատեսվում է իրականացնել բազմակողմանի փոփոխություններ՝ ենթակառուցվածքների զարգացման, նորագույն սարքավորումներով վերազինման, հիվանդանոցային պայմանների բարելավման, բժշկական ծառայության աշխատողների անկախության արդյունա-

վետության բարձրացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման ոլորտներում: Այսպես՝

1) քրեակատարողական հիմնարկների առողջապահական սպասարկման ծառայությունների վերահսկողությունն ապահովելու նպատակով առաջարկվում է վերահսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝ նույն կերպ, ինչպես դա իրականացվում է հանրային առողջապահական համակարգում.

2) բժշկական փաստաթղթերի, բժշկական վիճակագրության, առողջական խնդիրների փաստաթղթավորման վերաբերյալ առաջարկվում է ուսումնասիրել հանրային առողջապահական հաստատություններում կիրառվող բժշկական փաստաթղթերի ձևերը և մշակել օրենսդրական փոփոխություններ, որով կհաստատվեն քրեակատարողական հիմնարկների համար պարտադիր բժշկական փաստաթղթերի ցանկը, դրանք վարելու կարգը, ներկայացվող պահանջները, ձևերը, այդ թվում՝ հիմնարկներում վարվող բժշկական քարտի ձևը, որտեղ մանրամասն պետք է նշվեն անձի առողջական վիճակին առնչվող ամբողջ տեղեկատվությունը, բժշկի կողմից կատարված բոլոր գործողությունները, դրանց վայրին և ամսաթվին՝ ժամանակին վերաբերող բոլոր տվյալները՝ հնարավորության դեպքում քարտին կցելով առողջական վիճակը հավաստող լուսանկարներ.

3) քրեակատարողական առողջապահական ինստիտուցիոնալ համակարգի բարեփոխման հնարավոր տարբերակ կարող է դիտարկվել համապատասխան օրենսդրական փոփոխությունների մշակումը քրեակատարողական բուժօգնության ծառայությունը քրեակատարողական վարչության ենթակայությունից հանելու և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը հանձնելու վերաբերյալ: Նշված փոփոխության արդյունքում կապահովվի բժշկական անձնակազմի մասնագիտական անկախությունը, որն էլ իր հերթին կնպաստի պատշաճ որակի ծառայությունների մատուցմանը: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության

կողմից ըստ այդմ մշակվել է ՔԿՀ-ի բժշկական ծառայողների անկախության երաշխավորմանն ուղղված օրենսդրական բարեփոխումների փաթեթ:

Ինստիտուցիոնալ համակարգի բարեփոխումները ներառելու են նաև համապատասխան միջոցառումներ՝ ուղղված քրեակատարողական առողջապահական համակարգի և հանրային առողջապահական համակարգի շարունակական համագործակցության ապահովմանը, իսկ, որպես հեռանկարային լուծում, հետագայում քննարկվելու է նաև քրեակատարողական բուժօգնության ծառայությունը հանրային առողջապահության համակարգին ինտեգրելու հարցը:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկայացված օրենքի նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածը թողնել անփոփոխ:

Պ-126-11.09.2017-ՊԻՄԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՁԵՐՔԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության՝ 2002 թվականի փետրվարի 6-ի ՀՕ-305 օրենքի 21-րդ հոդվածի հինգերորդ պարբերության 1-ին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ. «Ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերն անմիջապես տեղեկացնում են շտապ բժշկական օգնության ծառայություն, որի մասնագետ բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը»:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՁԵՐՔԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը եւ առկա խնդիրները

«Ձերբակալված եւ կալանավորված անձանց մասին» օրենքի համաձայն՝ ձերբակալված կամ կալանավորված անձին ձերբակալվածներին եւ կալանավորվածներին պահելու վայր ընդունելու եւ գտնվելու ժամանակ անձի մոտ մարմնական վնասվածքներ հայտնաբերվելու դեպքում բուժզննությունը իրականացնում են ձերբակալվածներին եւ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերի հաստիքային բուժաշխատողները կամ վարչակազմի կողմից՝ հրավիրված այլ բուժաշխատողը: Նման իրավիճակը չի ապահովում անհապաղ, օբյեկտիվ եւ անկախ բուժզննում իրականացնելուն, այն դեպքում, երբ անձին ձերբակալվածներին եւ կալանավորվածներին պահելու վայր ընդունելու եւ գտնվելու ժամանակ կատարվող բուժզննումը միջազգային չափանիշների համաձայն պետք է իրականացվի անկախ բժիշկի կողմից: Ձերբակալվածներին եւ կալանավորվածներին պահելու վայրում անձի մոտ մարմնական վնասվածքներ հայտնաբերվելու դեպքում՝ անկախ բժիշկի կողմից բուժզննում չիրականացնելու արդյունքում՝ ձերբակալված կամ կալանավորված անձինք չեն կարող իրենց իրավունքները արդյունավետ պաշտպանելու հնարավորություն ունենալ:

Առաջարկվող լուծումները

Նախագծով առաջարկվում է «Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածում լուծել այն կարետոր հանգամանքը, երբ ձերբակալված կամ կալանավորված անձին ձերբակալվածների կամ կալանավորվածների վայր ընդունելիս կամ գտնվելիս անձի մոտ, եթե մարմնական վնասվածքներ է հայտնաբերվում, ապա անհապաղ ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը

անմիջապես տեղեկացնում է շտապբուժօգնության ծառայություն, որի բուժաշխատող մասնագետն իրականացնում է բուժզննությունը:

Ակնկալվող արդյունքները

Օրենքի ընդունման արդյունքում ձեռքակալված կամ կալանավորված անձին ձեռքակալվածների կամ կալանավորվածների վայր ընդունելիս կամ գտնվելու ընթացքում անձի մոտ մարմնական վնասվածքներ հայտնաբերվելու դեպքում բուժզննությունը կիրականացվի անկախ բուժաշխատող մասնագետի կողմից, եւ դրա արդյունքում ձեռքակալված կամ կալանավորված անձինք իրենց իրավունքները առավել արդյունավետ պաշտպանելու հնարավորություն կունենան, ինչպես նաեւ հնարավորինս կկանխի նրանց նկատմաբ բռնության գործադրման հնարավոր դեպքերը, որը բխում է ձեռքակալված անձին արգելանքի եւ կալանավորված անձին կալանքի տակ պահելու ընդհանուր սկզբունքներից: Նորմի կիրարկումը կապահովի մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված խոշտանգումների արգելքի խախտումը վերացնելու եւ արդյունավետ քննություն իրականացնելու, եվրոպական դատարանի չափանիշները ապահովելու համար: